

Fred Hutchinson Cancer Center  
University of Washington

**Հաւանության կարճ ձեւաթուղթ՝ ուսումնասիրական հետազոտությունում մասնակցելու համար**

Պրոտոկոլի համարը՝ \_\_\_\_\_

Գլխավոր հետազոտողի անունը՝ \_\_\_\_\_

*Եթե դուք ծառայում եք որպես իրավականորեն լիազորված ներկայացուցիչ կամ ծնող/խնամակալ եք, կամ թույլտվություն եք տալիս երեխայի՝ այս հետազոտությունում, «դուք» եւ «ձեր» բառերը վերաբերում են այն անձին, որի համար դուք տալիս եք հավանություն կամ ծնողական թույլտվություն:*

**Ձեզանից խնդրվում է մասնակցել ուսումնասիրական հետազոտությունում:** Դուք պետք է ժամանակ տրամադրեք որոշելու, թե կմասնակցեք հետազոտության: Դուք կարող եք քննարկել ձեր այլընտրանքները ցանկացած անձի հետ:

Մասնակցելու թե չմասնակցելու որոշում տալուց առաջ, մենք կբացատրենք՝

1. Գլխավոր տեղեկությունը այն մասին, թե ինչու դուք կարող եք ցանկանալ կամ չցանկանալ մասնակցել հետազոտությունում.
2. Ինչու կատարվում է հետազոտությունը, ինչ կպատահի հետազոտության ընթացքում եւ որքան ժամանակ կտեւի հետազոտությունը.
3. Որ ընթացակարգերը փորձառական են.
4. Հետազոտությունում լինելու նախատեսված ռիսկերը, անհանգստություններ եւ նպաստները.
5. Հետազոտությունում լինելու պոտենցիալ նպաստ բերող այլընտրանքներ, եւ
6. Ինչպես կը պաշտպանվի ձեր գաղտնիությունն ու գաղտնապահությունը:

Երբ կիրարկելի լինի, կբացատրենք նաեւ՝

1. Որեւէ առկա հատուցում կամ բուժում եթե կվնասվեք հետազոտությունում.
2. Հնարավորություն, որ լինեն ռիսկեր, որոնց մասին դեռ ոչինչ չգիտենք.
3. Ինչու դուք կարող եք հեռացվել հետազոտությունից.
4. Հետազոտությունում մասնակցելու որեւէ ծախս.
5. Ինչ կլինի եթե կորոշեք թողնել հետազոտությունը.
6. Երբ կիմանաք նոր գյուտերի մասին, որոնք վերաբերում են հետազոտությանը.
7. Որքան մարդիկ պլանավորված են հետազոտության համար.
8. Ինչպես ձեր տեղեկություններն ու կենսամուշնէրը (ինչպես արյուն կամ հյուսվածք) կօգտագործվեն հետազոտությունում եւ ապագա ուսումնասիրությունում, եւ եթե կստանաք որեւէ եկամուտ, որը կգա ձեր կենսամուշնէրի օգտագործմամբ մշակված որեւէ արտադրանքից.

9. Եթե գենոմայի ամբողջական կարգավորում կկատարվի ձեր կենսանմուշմերում.
10. Եթե ուսումնասիրության արդյունքները ձեր կամ ձեր առողջության մասին կկիսվեն ձեզ հետ, եւ
11. Որեւէ այլընտրանքային հետազոտություններ, որոնց ձեր մասնակցությունը կարող է խնդրվել:

Ի լրումն, եթե պահանջվում է, որ հետազոտությունը տեղադրվի [clinicaltrials.gov](http://clinicaltrials.gov) կայքէջում, կբացատրենք, որ՝

Այս կլինիկական փորձի նկարագրությունը կտեղադրվի <http://www.ClinicalTrials.gov> կայքում՝ ԱՄՆ օրենքի համաձայն: Այս կայքէջը չի ընդգրկելու որեւէ տեղեկություն, որը կարող է նույնականացնել ձեզ: Առավելագույնը՝ կայքէջը կընդգրկի արդյունքների ամփոփումը: Դուք կարող եք որոնել այս կայքէջում ցանկացած պահին:

### **Ձեր իրավունքները**

Դուք պարտավոր չեք մասնակցելու այս հետազոտությանը: Դուք ազատ եք այո կամ ոչ ասելու: Եթե դուք մասնակցում եք այս հետազոտությանը, դուք պարտավոր չեք մնալու նրանում: Դուք կարող եք դադարել մասնակցելուց որեւէ ժամանակ (նույնիսկ սկսելուց առաջ): Տուգանք չկա՝ ոչ ասելու կամ դադարել մասնակցելու համար: Ձեր սովորական բժշկական խնամքը չի փոփոխվելու:

Եթե դուք հիվանդանաք կամ վնասվեք հետազոտությունում, դուք չեք կորցնի հատուցում որոնելու ձեր իրավունքներից որեւէ մեկը՝ այս ձեւաթուղթը ստորագրելիս:

Եթե համաձայնվում եք մասնակցել, դուք կստանաք այս ձեւաթղթի պատճենը եւ հետազոտության անգլերեն հավանության ձեւաթղթի պատճենը:

### **Լրացուցիչ տեղեկության համար**

Դուք կարող եք կապվել գլխավոր հետազոտող \_\_\_\_\_-ին \_\_\_\_\_ երբ հարցեր ունենաք հետազոտության կամ հետազոտության հետ կապված վնասվածքի մասին:

Ձեր՝ որպես հետազոտության ենթարկվող անձի, իրավունքների մասին հարցեր ունենալու դեպքում Դուք նաև կարող եք կապվել Institutional Review Office-ի տնօրենի հետ, որը գտնվում է Fred Hutchinson Cancer Center-ում՝ 206.667.5900 հեռախոսահամարով կամ էլ. փոստի [irodirector@fredhutch.org](mailto:irodirector@fredhutch.org) հասցեով:

## Ստորագրություն

Եթե դուք ստորագրում եք այս ձեռագրությունը, նշանակում է, որ նկարագրել ենք հետազոտությունը և դուք կամավորապես համաձայնվել եք մասնակցելու:

---

Մասնակցի տպագիր անունը և                      Տարեթիվ  
ստորագրությունը Կամ իրավաբանորեն  
լիազորված ներկայացուցիչ, եթե կիրառելի է

---

Իրավականորեն լիազորված ներկայացուցչի հարաբերությունը  
մասնակցի հետ, եթե կիրարկելի լինի

---

Թարգմանիչ/վկա Տպագիր անուն                      Տարեթիվ  
և ստորագրություն